

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ



ՀԱՆԳԻՍՏ

Տ. ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆԻ

ՄԻԱԲԱՆԻ

ՈՒԽՏԻՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ

(1904–1996)

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ «Սիոն» ամսագրի խմբագրութիւնը խոր սուգով կը գուժեն մահը Գերաշնորհ Տ. Նորայր Արքեպս. Պողոսեանի, որ հանգեալ ի Տէր 19 դեկտեմբեր 1996, հինգշաբթի ժամը 10:30-ին, Երուսաղէմի Ֆրանսական Հիւանդանոցին մէջ:

Իրմով Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին եւ ի մասնաւորի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը կը կորսնցնեն բազմավաստակ, լուսամիտ եւ ներհուն հոգեւորական մը, որ իր ամբողջ կեանքը ի սպաս դրաւ Աստուծոյ եւ իր ժողովուրդին ծառայութեան:

Իր մահով կ'ողբանք կորուստը վաստակաւոր ուսուցչին եւ եկեղեցւոյ կարգին բազմամուտ վարդապետին, որ եօթը տասնամեակէ աւելի երկարաձգուող ժամանակի ընթացքին Դուրեանի եւ Կիւլիսէրեանի Հայեցի շունչին տակ ստացած իր ուսման սէրը եւ իր իսկ ջանքերով ամբարած գիտութիւնը փոխանցեց նորահաս սերունդներուն, որոնք իրենց կարգին լծուեցան եկեղեցւոյ գործին եւ ազգային ծառայութեան:

Կ'ողբանք կորուստը «Սիոն» ամսագրի երկարամեայ աշխատակիցին, որ ժրջանօրէն պեղեց մեր մշակոյթի գանձերը եւ հանրութեան սեփականութիւն դարձուց զանոնք: «Սիոն» ամսագրի նոր շրջանի սկզբնական թիւերէն սկսեալ երեւցան անոր բովանդակալից կրօնական, գրական եւ բանասիրական յօդուածները, որոնք մեծապէս գնահատուեցան:

Կը սգանք մահը Հաւատաւոր Հինաւուրց միաբանի մը, որ առանց դժկամակութեան եւ անթերի կերպով կատարեց իր վրայ դրուած բոլոր պարտականութիւնները մայրավանքէն ներս եւ Սուրբ Տեղեաց մէջ: Ազգային իրաւունքներու ի խնդիր բազմաթիւ դժուարութիւններու դէմ մաքարող եռամեծար Պարոնտէրնու եւ Շղթայակիրներու օրինակին հետեւելով՝ ան ամէն կերպով արժանի դարձաւ դասակիցը ըլլալու այն նուիրեալներուն, զորս ինք կը կոչէր «Սիոնի որդիք»:

Կ'ողբանք նաեւ կորուստը մեծ բանասէրին, որ առանձինն կատարեց մի քանի տասնեակ գիտականներու գործը՝ ցուցակագրելով տասնմէկ մեծագիւր հատորներու մէջ Սրբոց Յակոբեանց ձեռագրատան Հազարաւոր գրչագիր մատենաները: Այդ կոթողական աշխատանքին առընթեր ան մոռացութենէ փրկեց բազմաթիւ նիւթեր մեր մշակոյթի պատմութեան վերաբերեալ, որոնցմէ ոմանք լոյս ընծայեց հատորներով իսկ մնացեալներուն անդրադարձաւ յօդուածներով: Իր աշխատասիրութեանց երկար շղթային օղակները կը կազմեն մատենագիրներու, աշուղներու, գրիչներու, վանքերու,

վաւերագրերու, ծիսագիտութեան, կանոնագիտութեան եւ այլ նիւթերու նուիրուած ուսումնասիրութիւններ, զորս միայն իրեն նման մեթոտիկ աշխատասիրող մը կրնար լոյս ընծայել:

Նորայր Սրբազան մեկնեցաւ այս աշխարհէն լի աւուրք՝ Կ'աղօթենք որ Տէր Աստուած իր Արքայութեան լոյսերուն արժանի ընէ անոր հոգին եւ անոր օրինակելի կեանքին հետեւողներ ընծայէ ի փառս Անուան Իւրոյ:

«Յիշատակմ արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ԿՈՉ

«Սիոն» ամսագրի խմբագրութիւնը ներկայ կոչով կը հրաւիրէ հանգուցեալ Տ. Նորայր Արքեպս. Պողարեանի աշակերտած հոգեւորականները եւ գրչի մշակները, որ հանգուցեալին վերաբերեալ իրենց յուշերը գրի առնեն եւ այդպիսով մասնակցութիւն բերեն Սրբազանին յիշատակին նուիրուած բացառիկ թիւին, զոր կը ծրագրենք լոյս ընծայել ընթացիկ տարուան վերջաւորութեան: Նոյն թիւին մէջ ընդարձակ բաժին պիտի յատկացուի բանասիրական յօդուածներու եւ պիտի տրուին Սրբազանին կենսագրութիւնը եւ աշխատասիրութիւններուն ցանկը: Հաճեցէք ձեր գրութիւնները ուղարկել խմբագրութեանս հասցէին մինչեւ 31 յուլիս 1997:

